

090144407 Հ 1961 թ.

375

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԱԿԻ
ՑԵՎ

ԹՐՈԿԱՆՈՒԹՅՈՒՆ

A 23099



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ԹՅՈՒԽՆ

ՑԵՎ ԵՎ ԱՆ 1936

Լեզվի ծրագրի պատ. խմբագիր՝ Գ. Ս և Կ
Գրականության ծրագրի պատ. խմբագիր՝ Տ. Ե և Յ Ա և Հ
Տեխ. խմբագիր՝ Գ. Զ Ե Ա յ ա ն
Արքագրիչ՝ Ա. Արքայանյան

Հբառարակ. 3819, Գլամ. լիազոր Ա—1163. Պատվեր 999. Տիբա
Հանձնված ե արտադրության 7-ին սպասութ 1936 թ.
Ստորագրված ե տպագրելու 17-ին սպասութ 1936 թ.
Պետհրատի տպարան, Յերևան, II Գնունի, 4

ԼԵԶՈՒ

5—8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հինգերորդ դասարան

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Խոսքը վորպես մտածության արտահայտություն . նախաղառություն . նախաղառության գլխավոր անդամները՝ յենքակա և սոսրոզյալ . նախաղառության մյուս անդամները վորպես լրացումներ :

Բառ . վանկ . հենչյուն . տառ . հայերենի այլուրենը . ձայնավորներ և բաղաձայններ . հայերենի բաղաձայն հնչյունների ստորաբաժանումները՝ ա) ըստ արտաքերման տեղի և բ) ըստ աղմուկի ու ձայնալարերի մասնակցության չափի (ձայնեղ խուլ և չնչեղ խուլ) :

Բառակազմություն . բառերի տեսակներն ըստ կազմության . արմատ և ածանց . (պարզ բառեր, ածանցավոր բառեր, նախածանց և վերջածանց . բարդ բառեր . բարդ բառերի տեսակները . բարդ ածանցավոր բառեր . հայերենի կարեռը ածանցները . նորագույն հասլավումները : Հիմք և վերջավորություն : Բառերի տեսակներն ըստ իմաստի և արտաքին հնչյունական կողմի՝ նորյանիշ, հականիշ, համանիշ և համանուն բառեր :

Ուղղագրություն . յա, յու, յո, յե յերկհնչյունները . յ ձայնակապի ուղղագրությունը . իա և յա, իա, ին, իու, իո յերկհայնավորների ուղղագրությունը :

Բաղաձայնների ուղղագրությունը . ձայնեղների վերածվելը

չնչեղ խուլերի . թ և դ հնչյունների դերն այս դեպքում . ոտաբ-
բառերի ուղղագրությունը :

Խոսիր մասեր . գոյական , ածական , թվական , դերանուն ,
բայ , մակրայ , կտալ , շաղկապ և ձայնարկություն :

Գոյական . առարկաներ՝ իրային և վերացական . հատուկ և
հասարակ գոյականներ . գոյականի հոլովումը , գոյականի ա-
ռումները՝ անձ և առարկա . ուղղական , սեռական , տրական ,
հայցական , բացառական , գործիական և ներգոյական հոլովները
և նրանց հիմնական ֆունկցիաները :

Հոլովմանները . ի , ու , ան , յան , ոզ , որ , վա , ց հոլովում-
ները . հակագիր գոյականների հոլովում . գոյականները ա-
ծանցներ և նրանց ուղղագրությունը :

Ածական . ածականի տեսակները՝ վրակական և հարաբերա-
կան . ածականի գործածությունը գոյականի հետ . ածականի հո-
լովումը . ածականի վերածումը գոյականի և ընդհակառակը . ա-
ծականները ածանցներ (ային , ական և այլն) . ածականների
ուղղագրությունը :

Թվական . թվականի տեսակները՝ քանակական և դասական .
դասականների ածանցները . թվականների գործածությունը գո-
յականի հետ . թվականների հոլովումը . թվականների ուղղա-
գրությունը :

Քերանուն . դերանունների տեսակները՝ անձնական , ցուցա-
կան , ստացական , փոխադարձ , հարցական , հարաբերական , ա-
նորոշ , վորոշյալ , ժխտական կամ բացասական : Դերանունների
հոլովումը . անհզմական դերանուններ , անհոգնակի դերանուններ .
դերանունների ուղղագրությունը :

Բայ . բայի ձևերը՝ դերբայական և յեղանակային . դերբայ-
ների տեսակները՝ անորոշ , անկատար , պատճի , վաղակատար ,
հարակատար , յենթակայական և ըգճական , դրանց իմաստը և
գործածությունը . բայի յեղանակային ձևը . դեմք , թիվ , ժա-
մանակ , յեղանակ :

Խոնարհում . սահմանական , հրամայական , ըգճական , պայ-
մանական և հարկադրական յեղանակներ . սահմանական յեղա-
նակի ժամանակները . հրամայական յեղանակը . ըգճական յեղա-
նակի կազմությունը և ժամանակները . պայմանական յեղանակի
կազմությունը և ժամանակները . հարկադրական յեղանակի կազ-

մությունն ու ժամանակները . ուղղագրություն . բայի ել և ալ խոնարհումը (առաջին և յերկրորդ խոնարհումը) : Նախաղասության վերլուծություն ըստ անդամների և ըստ խոսքի մասերի :

2. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱԿՈՐ ԽՈՍՔ

Հողվածի գրական-գեղարվեստական պարզ վերլուծություն (բանալոր) . անդեկասու զեկուցում . հողվածի շարադրական վերլուծություն . հողվածն ընդարձակելու և համառոտելու հմտություն . նախորոք մշակված պլանի ոգնությամբ պարզ թեմայի մասին գրավոր շարադրություն . ինքնակենսագրություն . պարզ ընութագրություն . զբավոր գերականական վարժություններ . դորձնական զբություններ :

3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծանոթություն գրքին՝ անուն , հեղինակ , հրատարակություն , հրատարակություն , հրատարակության վայրը , տարեթիվ , տիրաժ , առաջարան , ցանկ , բաժիններ , գլուխ և այլն : Ծանոթություն գրադարանից գիրք ստանալու կարգին . բացատրական և ուղղագրական բառարաններից ոգտվելու հմտություն : Կարդացածի կարևոր և անհրաժեշտ տեղերն առանձնացնելու հմտություն (8 ժամ) :

ԳԵԳԵՐՈՐԳ գասարան

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ , ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ , ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բայ . բայի ժխտական խոնարհումը և նրա ուղղագրություններ . բայի սեռերը՝ ներգործական , չեզոք և կրավորական . բայի կերպերն ըստ կաղմության՝ սոսկական , կրավորական , պատճառական , բազմապատկանական . գալ , տալ , ուտել և լինել անկանոն բայերի խոնարհումը . ենալ , անալ , նել և չել վերջավորություններ ունեցող բայերի խոնարհումը . գլխավոր և յերկրորդ գական բաղադրյալ ժամանակներ :

Մակրայ . մակրայի անսակները . մակրայի տարրերությունն ածականից . մակրայների կաղմությունը և պատմական անդե-

կորթյուններ նրանց մասին. Ճակաայների գործածությունը նա-
խադասության մեջ:

Կապ. կապերի տեսակները՝ նախադրություն և հետադրու-
թյուն. դրանց հողովական խնդրասությունը և գործածությու-
նը. իսկական և անխսկական կապեր, կապական բառեր. պատ-
մական տեղեկություններ նրանց մասին:

Շաղկապ. ստորագասական և համադասական շաղկապներ.
պարզ և բաղադրյալ շաղկապներ:

Զայնարկություն. ճայնարկության առանձնահատկություն-
ները խոսքի մյուս մասերի համեմատությամբ:

Խոսքի մասերի փոխադարձ փոխանցումները:

Շարակայություն. մտածություն, խոսք. նախադասու-
թյուն. պարզ և բարզ նախադասություն. պարզ նախադասու-
թյան գլխավոր անդամները՝ յենթակա և ստորովյալ, նրանց
միասնությունն ու համաձայնությունը. համառոտ նախադասու-
թյուն. ընդարձակ նախադասություն. զեղչված յենթակայով և
զեղչված ստորոգյալով նախադասություններ: Ընդարձակ նա-
խադասության գլխավոր անդամների լրացումները: Յենթակայի
լրացումներ՝ վորոշչ, հատկացուցիչ, բացահայտիչ. ստորոգյա-
լի լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ. ուղիղ և անուղղակի
խնդիրներ. տեղի, ժամանակի, չափի, ձևի, պատճառի, հիմուն-
քի և նպատակի պարագաներ: Հոլովների փունկցիաները. սեռա-
կան և հայցական հոլովները հայերենում և նրանց առանձնա-
հատկությունները:

Լրացման լրացումներ. վորոշչ, հատկացուցիչ, բացահայ-
տիչ, կողմանակի խնդիրներ և պարագաներ. յերկրորդ, յերրորդ,
չորրորդ և այլն աստիճանի լրացումներ, նրանց փունկցիան նա-
խադասության մեջ: Կապակցություն (համաձայնություն և շա-
րադասություն):

Հարցական, պատմողական, բացականչական և հրամայական-
նախադասություններ. կոչական բառով նախադասություններ.
Ճայնարկությունների գործածությունը բացականչական նախա-
դասությունների մեջ. միջանկյալ բառերով նախադասություն-
ներ. հաստատական և ժխտական նախադասություններ. կետա-
գրություն:

Զեղչված անդամներով նախադասություններ. անդեմ և ան-
յենթակա նախադասություններ:

Նախադասություններ՝ համարկաս կամ բազմակի անդամները՝ կետադրություն:

Բարդ նախադասություններ. միավորյալ նախադասություններ. բազմակի յենթակայով և բազմակի ստորոգյալով միավորյալ նախադասություններ. կետադրություն:

Համադասական նախադասություններ: Միջանկյալ նախադասություններ: կետադրություն:

Վերլուծություն ըստ նախադասության տեսակների. վերլուծություն ըստ նախադասության անդամների և խոսքի մասերի:

2. ԲԱՆԱԳՈՐ ՅԵՎ ԳՐԱԳՈՐ ԽՈՍՔ

Բանավոր զեկուցում պլանով կամ կոնսոլեկտով: Շարադրության մանէամասն նախադիծ կազմել նախարանով և վերջարանով:

Համեմատական բնութագրություն. ինքնուրույն շարադրություններ՝ գործադրելով լեզվի պատկերավորության միջցները՝ համեմատություն, փոխադրելություն, մակդիր, այլարանություն և այլն: Նկարագրական բնույթի ինքնուրույն գրավոր աշխատանքներ գրել (տպագորություններ՝ կարգացած գրքերից, տեսած կամ լսած յերեսույթների մասին և այլն): Արտադրական պրոցեսի, մեքենայի և գործիքի նկարագրություններ. քերականական գրավոր վարժություններ (25 ժամ):

3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոնսոլեկտ կազմելու հմտություն. սահմանված թեմայի շուրջը շիտատներ հավաքելու հմտություն:

Յոքերորդ գասարան

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասություններ. բարդ ստորադասական նախադասությունները, նրանց կազմությունը. գլխավոր և յերկրորդական նախադասություններ. յերկրորդական նախադասու-

թյունները վորպես գլխավոր նախադասության անդամներին փոխարինողներ և լրացնողներ . նախադաս, միջադաս և վերջադաս յերկրորդական նախադասություններ : Ստորագլասական շաղկասուների գործածությունը :

Կետադրությունը բարդ նախադասություններում :

Յերկրորդական նախադասությունների տեսակները : Դերքայական լրացում . կողմնակի յենթակա և կողմնակի լրացումներ : Բարդ նախադասության վերածումը պարզի՝ դերքայական լրացման և կողմնակի յենթակայի միջոցով . դերքայների գործածությունն այս դեպքում :

Կետադրություն . տրոհության, բացահայտության և առողջանության նշանները . ստորակետի գործածության բոլոր դեպքերը, միջակետի և բութի գործածության բոլոր դեպքերը . դիմում և նրա գործածությունը հայերենում . բարձրակետի, չակերտի, փակադի, հարցականի, բացականչական և յերկարացման նշանների գործածությունը հայերենում : Նախադասության վերլուծությունն ըստ նախադասության տեսակների, ըստ նախադասության անդամների և ըստ խոսքի մասերի :

2. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Յելույթներ ունենալիս՝ կարողանալ թե՛ կրճատումներով և թե՛ բարդ մեջբերումներ կատարել : Յիտատներն ողտագործելու ունակության խորացում :

Վերլուծական չարաշերություններ և համառոտագրություն :

Գյուղի և քաղաքի հասարակական ու արտադրական կյանքի գրաւլոր վերաբարելություն (ինքնուրույն աշխատանք) :

Բնության նկարագրություններ :

Աղաս թեմայով շարադրություն :

Քերականական դրավոր վարժություններ :

3. ԳՐՔՈՎ ԱՃԻԱՏԱՆՔ

Կարդացածի շուրջը թեղիսներ և բանաձեռ կազմելու հըմտություն (յեղակացություններ և առաջարկություններ) :

Բարդ և ընդարձակ պլան կազմելու հմտություն :

Առձեռն բարարանից ողտափելու վարժություն :

1. ՏԱՄՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեզուն նույնքան հին է, վորքան և գիտակցությունը. լեզուն հենց գործնական, ուրիշ մարդկանց համար գոյություն ունեցող, ուրեմն ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն ե» (Մարք)։ «Լեզուն—մարդկային հազորդակցման կարևորագույն միջոց» (Լենին)։ Լեզվի, ինչպես և գիտակցության ծագումը «ուրիշ մարդկանց հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից ու կարիքից»։ Տարբեր լեզուների փոխազդեցությունները, նմանություններն ու տարբերությունները։ Լեզուն վորպես զարգացման յենթակա սոցիալ-պատմական յերեփություն։ Փոխառյալ քառերը և փոխառության սոցիալական պատճառները։ Հին փոխառություններ (յեկեղեցի, կաթոլիկոս, բազին, դժոխք, մարդարե), նոր փոխառություններ (տրակտոր, կոլեկտիվ, ռազմիո, բարեկալ, կուլտակ)։

Գրաբար լեզուն և միջին հայերենը, վորպես ֆեոդալական հասարակության տարբեր ըրջանների գրական լեզուներ։ Միջին հայերենով գրված յերկերն ու նրանց տեսակները։

Հայ բուրժուազիայի դաստկարգայնորեն կազմակերպվելու ըրջանը (19-րդ դարի կեսերը). աշխարհաբարը վորպես գրական լեզվի և բարբառների միասնություն։ Աշխարհաբարի և գրաբարի պայքարը. գրական աշխարհաբարը. գրական հայերենի հասատման հիմնական պատճառները։ Նազարյանի և Նալբանդյանի լեզվագիտական ըմբռնումները։ Աշխարհաբար գրականին նախորդող ըրջանները։ «Հյուսիսափայլը»-ի գերը գրական լեզու ստեղծելու ասպարիզում։ Հայոց գեղարվեստական գրականության գերը գրական հայերենի զարգացման և տարածման գործում։ Նախահեղափոխական գրական հայերենի ուղղագրությունը։

Հայերենի բարբառների հիմնական բաժանումը՝ կը, ում և նի (ևս) ճյուղերի։ Հայերենի բարբառների պարզ թվարկումն ու տարբարական գաղափար նրանց մասին։ Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը։

Պրոլետարական հեղափոխությունը Հայաստանում, նոր սո-

ցիւլական հարաբերությունները և մեր լեզվի մէջ առաջացած փոփոխությունները (բառապաշտ, բառիմաստ, ձեւաբանություն) :

Հայերենի ուղղագրության ուժորմը և նրա բնույթը :

Զեռվ աղքալին, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի դարձացման ստալինյան դրույթը :

Հայոց լեզվի դարձացման նոր ետապը Հայաստանի խորհրդայնացումից հետո .

ա) նոր բառերի ստեղծում .

բ) բառակարմության նոր ձևերի ստեղծում .

տ) բառերի իմաստի փոփոխություն .

դ) բուրժուարկղերական աշխարհայացք արտահայտող բառերի մահացում .

յե) Լեզվի գեմոկրատացում և մասսայականացում :

Ընկ. Ստալինը գալիք համաշխարհային միասնական լեզվի հարցի վասին:

2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ,

Կետադրություն. կետադրության նշանակությունը գրավո՞ւ խոսքի համար :

Առօգանության նշանները և նրանց գործածությունը. շետ, բացականչական նշան, հարցական նշան:

Բացահայտության նշանները և նրանց գործածությունը. բազմակետ, կախման կետեր, չակերտ, վակազիծ, անջատման գիծ, միության գծեկ, ապաթարց:

Տրոհության նշանները և նրանց գործածությունը. վերջաւու, միջակետ, ստորակետ, բութ:

3. ԲԱՆԱԿՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Ամբողջական գեղարվեստական յերկերի վերլուծական չարագրություններ. տեսաբերի վերլուծություն. գրողների բանալոր և գրավություններ, գրողների համեմատական բնութիւն (կոնսալեկտով և թեզիսով):

Առաջարկված թեմաների շուրջը շարադրություն գրելու հրժա-
տություն, գործադրելով պարզ հետազոտական բնույթ կրող
յեղանակներ. նկարագր. թյուններ. ուրվագծեր:

4. ԳՐԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Գրքի մշակման ու ոգտագործման լիակատար գիտություն,
կոնսուլտուս, տեքստուալ (բնադրային) կոնսուլտուս, պլան (սպարզ և
ընդարձակ), համառոտագրություն, ցիտատներ (քարտային սիս-
տեմ):

Յերկու և այլելի աղբյուրներից ոգտվելու ունակություն.
մատենագրական (թիրլիոգրաֆիկ) և այլ ուղեցույցներից ոգտ-
վելու հմտություն. բառարաններով աշխատելու ունակություն
(2 ժամ):

Բ Ա Յ Ա Տ Բ Ա Կ Ա Ն

1. Աշակերտներին պետք է բացատրել նախադասության հե-
տեւյալ հառկանչենքը.

ա) նախադասությունն արտահայտում է այլելի կամ պակաս
չափով մի սմիռնի միտք (առանձին, ամբողջական միտք).

բ) հիմնականում արտահայտում է այն առարկան (անձ կամ
եր), վոր գործում կամ լինում է և նրա գործողությունն ու յե-
ղելությունը (շարժումը):

գ) ունի յերկու գլխավոր անդամներ, վորոնք հիմնականում
ձեռալրում են միտքը.

դ) հանդիսանում է խոսին քերականորեն ձևավորված միա-
վորը (համաձայնություն, ինքառություն, շարադասություն):

2. Նախածանցներ պիտի համարել վոչ միայն ժխտական նա-
խածանցները (չ, առ, ոժ, ան, ա), այլև արտ, բաց, գեր,
հակ, համ, մակ, յենք, ներ, շար, պար, վեր, տար և այլն:

3. Ածական պիտի համարել բառերը վոչ այն սկզբունքով,
վոր նրանք ածվում, վրա յեն բերվում գոյականներին, այլ ա-
ռաջնորդվելով բառերի արտահայտած իմաստով: Ըստ այսմ
ածականներ են այն բառերը, վորոնք իրենց ընդհանուր իմաստով
արտահայտում են առարկայի հատկությունը, վերաբերությունը
և ինչ նյութից լինելը (վորակական և հարաբերական ածական-
ներ):

4. Գերանուններ են վոչ միայն այն բառերը, վորոնք փոխարինում են գոյականին, այլև ածականին, թվականին, յերբեմն եւ մակրային:

Փոխարինում ասելով չպիտի հասկանալ, թե յուրաքանչյուր կոնկրետ գեղքում կարելի յե ասել, թե վո՞ր դոյականին, ածականին կամ թվականին են փոխարինում գերանունները, այլ վո՞ր՝ գերանուն նշանակում ե կամ առարկա, կամ հատկություն, կամ դորձողության պարագա, կամ թե թիվ՝ առանց, սակայն, անմիջականորեն ցույց տալու, թե ի՞նչ առարկա յե, հատկություն ե, թիվ և և այլն:

5. Պետք ե կանգ առնել նաև այն դերանունների հոլովման վրա, վորոնք կամ յեղակի, կամ հողնակի չունեն. այդպիսիները նախադասության մեջ պետք ե դորձածել այլ անդամների հետ և կոնկրետ կիրառությամբ սովորեցնել:

6. Ըղձական դերբայ (այս տերմինը պայմանական ե) պիտի համարել պայմանական յեղանակի ժխտական խոնարհման անփոփոխ մասը. որինակ՝ չեմ զբի, չեմ կարդա: Պետք ե բացատրել, վոր նախահեղափոխական գրական լեզվի մեջ և մի քանի բարբառներում ասվում ե չեմ զբիլ, չեմ կարդալ, բայց մեր գրական հայերենում մերջին հնչյունն ընկել ե, և դոյացել նոր (ըղձական) դերբայ:

7. Պետք ե բացատրել, վոր բայի կերպեր կոչվում են բայի այն ձևերը, վորոնք խոնարհիչների (եւ և ալ) և բայահիմքի արանքում ածանց ընդունելով, միևնույն բայի արտահայտած դորձողության կամ յեղելության կատարման մեկ ուրիշ կերպն են ցույց տալիս:

8. Մակրայ պիտի համարել այն բառերը, վորոնք միմիշայն և կամ գերազանցապես բայի վրա յեն դրվում, արտահայտում են դորձողության վրակը, չափը, ձևը և այլն: Մի շարք մակրայներ հեշտությամբ ստուգաբանվում են, ուստի պետք ե բացատրել, վոր գրաբար լեզվի մեջ գրանք յեղել են թեքման ձեվեր, վորոնք աշխարհաբարում դորձածվել են վորպես սկզբնական ձև՝ փոխելով իրենց ձևաբանական կատեգորիան: Որինակ՝ զբէ թէ—զբեթէ, համարեմա—համարյա, ի հարկէ—իհարկե (բացառական հոլով), հարկալ (դորձիական հոլով) և այլն:

9. Կապ կոչվում են այն բառերը, վորոնք միացնում են լրացյալը լրացման հետ, մեծ մասամբ՝ ստորոգյալ հանդիսացող

բառը լրացում կազմող բառի հետ։ Կապը միանալով կապվող բառի հետ՝ կազմում է լրացում։ Կապերն առանձին վերջրած՝ նախադասության անգամ չեն լինում։ Պետք է բացառութել, վոր կապերից մի քանիսը նույնպես կազմվել են այլ խոսքի մասերի գրաբար թեք ձևերից։ որինակ՝ չորրհիվ (գործիական), դեպի և — գեղի և այլն։

10. Շաղկապները կապում են նախադասության համազոր անդամները, համազոր նախադասությունները միմյանց հետ և լրացնող նախադասությունները գլխավորի հետ։ շաղկապը կապվող բառի հետ լրացում չի կազմում, նշանակում ե՝ իր արժեքով և նշանակությամբ հիմնովին տարրերում ե կապերից։ Շաղկապները նույնպես նախադասության անդամ չեն լինում։

11. Մի շարք բառեր նախադասության մեջ կատարում են ուրիշ խոսքի մասերի պաշտոն (Փունկցիա) և յերկարատև գործածության հետևանքով վերածվել են այլ խոսքի մասերի, որինակ՝ պարքե, հորդված, մուք, խավար, հարլածային, Անուշ և այլն։

12. Ութերորդ դասարանից սկսվում ե լեզվի տեսությունը և հայոց լեզվի պատմությունը։ Լեզվի պատմությունը պետք է կապել գրականության պատմության հետ, քանի վոր հենց արդ դասարանումն ել սկսվում է հայոց գրականության պատմությունը։ Այն ներածականը, վոր արվում է գրականության պատմությանը, պետք է զգալի չափով (շուրջ չորս ժամ) հատկացվի լեզվի պատմությանը։ Այսպես, որինակ, յերբ խոսվում է գրաբարագիր գրականության մասին, պետք է խոսվի գրաբար լեզվի մասին։ Առանձին նմուշներ պետք է բերել գրաբարից և ցույց տալ այն հիմնական տարրերությունները, վոր ունի գրաբարն աշխարհաբարի համեմատությամբ։ Տարրական գաղափար տալով հայոց լեզվի ծագման մասին՝ պետք է հիշատակել հայերեն գրերի գյուղը՝ այն գիտելով վորպես կուտարական, քաղաքական յերկույթ, հիշատակել, վոր գրաբար լեզվի մեջ կան հնուց մնացած բազմապիսի փոխառություններ, վորոնք արտահայտում են հայ եթնիկական միավորի սոցիալ-տնտեսական և քաղաքական հնագույն կապերը փոխառու ժողովուրդների հետ։

Աշխարհիկ գրականության մասին գաղափար տալիս պետք է հիշատակել նաև միջին հայերենը և փոքրիկ նմուշներով ցույց

տալ նրա, գրաբարի և ժամանակակից հայերենի տարրերությունները, բացատրելով, թե ինչպես սոցիալ-պատմական հարաբերությունների վորոշ ետապղ ծնունդ ե տվել այդ հայերենին: Այդ լեզվի մանրամասն ծանոթությունը պետք չե, սակայն միջնադարյան տաղերդուների նմուշների ընթերցանությունն ընդհանուր գաղափար կտա միջին հայերենի և աշխարհիկ գրական լեզվի մասին:

Հայոց նոր գրականության շուրջը կարգացած ներածության հետ պիտի կապել նախահեղափոխական գրական հայերենի հրապարակ գալը, վոր հանդիսանում ե հայ բուրժուատղիայի գասակարգայնորեն կաղմակերպվելու արտահայտությունը, նշել այդ գրական հայերենի հիմնական տարրերը (գրաբար և բարբառներ) և ապա այն քաղաքականությունը, վոր վարել ե հայ բուրժուական ինտելիգենցիան այդ լեզուն կերտելու և զարդացնելու ընտարալառում: Հարկավոր ե նշել նաև մանր-բուրժուական ինտելիգենցիայի գերը գրական լեզվի ստեղծման գործում:

Բարբառային գրականության կապակցությամբ պետք ե հիշատակել հայերենի բարբառները և ծանոթություն տալ նրանց հիմնական տարրերի մասին: Թվարկելով յերեք ճյուղերի բարբառները՝ պետք ե ցույց տալ բարբառների և գրական լեզվի հիմնական տարրերությունները: Հիշատակելով Հայաստանի խորհրդայնացումը, պրոլետարիատի և խանության գլուխ կանգնելը, ընդգծել այն նորը, վոր հանդիսանում ե ժամանակակից գրական լեզվի առանձնահատկությունը, հատկապես լեզվի այն կողմերը, վորոնք արտահայտում են նրա նոր բարձր ժամկույթը: Դրա հետ միասին պետք ե բացատրել մեր լեզվի մեջ յեղած նոր փոխառությունները, համեմատելով նախահեղափոխական գրական լեզվի կատարած փոխառությունների հետ:

Այստեղ պետք ե ցույց տալ, թե ի՞նչպես և ի՞նչ կողմերով մեր գրական լեզուն արտահայտում ե «ձեռվ ազգային և բովանդակությամբ պրոլետարական» կուլտուրայի զարդացման ստալինյան թերը:

Դրանից հետո պիտի մշակել ընկ. Ստալինի գրույթը՝ համաշխարհային միասնական լեզվի ստեղծման մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍՏՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Կ Ա Ն

1. 5, 6 և 7-րդ դասարանների լեզվի և գրականության դասագրքի նյութերի ընտրությունը կատարված և մեթոդական այն ընդհանուր սկզբունքով, վոր այդ դասարանում գեղարվեստական դրականության ուսուցման նպատակն ե՝ մեր հին և նոր դրականության լավագույն և ամելալ տարիքին մտաշելի նմուշներով՝

ա) սովորեցնել աշակերտին մաքուր գրական լեզու,

բ) ծանոթացնել նրան—վորքան հնարավոր ե—րազմագանձարերի և հեղինակների հետ.

գ) ըստ բովանդակության՝ տալ աշակերտին վորքան կարելի յել լայն և բազմակողմանի պատկերացում ընության և մարդկային հասարակության սոցիալական հարաբերությունների մասին թե՛ անցյալում և թե՛ խորհրդային իրականության մեջ.

դ) դարդացնել աշակերտի մեջ սեր դեպի գրականությունը և դեղարվեստական խոսքի ճաշակը:

2. Վերոհիշյալ կետերի այստեղ տեխնիկապես իրարից բաժան լինելը չպիտի չնապահ հարուցի այն միտքը, իբրև նրանք ստաջադրվում են վորպես առանձին-առանձին նպատակադրումներ: Յերբեք չպիտք է աչքաթող անել այն, վոր նրանք կազմում են մի միասնական նպատակի զանազան կողմեր, և վոր այդ մենա աշակերտը կարող է ներընդունել միմիայն այն գեղագում, յեթե նրան տրվող նյութը՝ վերոհիշյալ բոլոր կետերը բավարարող՝ խսկական գեղարվեստական խոսք է:

3. Հիմք ունենալով մարքս-լենինյան գրականության մեջուղողութայի հիմնական դրույթը դրականության և կյանքի փոխհարաբերության մասին՝ ուսուցիչը տարրական կերպով, հարցումների կամ այլ մատչելի ձևով դադարիար և տալիս աշակերտին, թե, որինակ, վո՞ր ժամանակ հնարավոր եր գրել ավյալ գրվածքը, վո՞ր հերոսն ե իրեն, աշակերտին, սիրելի, գուցե այդ հերոսը սիրելի յե յեղել նաև հեղինակի համար, ի՞նչից ե յերեվում այդ, զուցե հեղինակը գիտակցարար և այդ արել, ի՞նչպես կանելի ինքդ նման դեպքում և այլն և այլն: Կատեղորիկ կերպով պետք ե խուսափել 13—15 տարեկան յերեխայի համար անըմբոնելի բառերից, տերմիններից և սխեմատիկ Փորմուլներից:

4. Հինգերորդ դասարանից ևեթ արված են նմուշներ թե՛ յեղողական և թե՛ Խորհրդային Միության յեղայրակից ժողովուրդների գրականությունից՝ աշակերտի ինտերնացիոնալ դաստիարակությանը նպաստելու և նրա գրական մտահորիզոնն ընդլայնելու նպատակով:

5. Դասերի ընթացքում ուսուցիչը միշտ պետք է նկատի առնի մաքուր և գեղեցիկ խօսքի կիրառումը թե՛ քանակոր և թե՛ գրավոր աշխատանքների ժամանակ: Ուսուցիչն ինքը պետք է որինակ հանդիսանա՝ ուշադրությամբ վերաբերվելով թե՛ գեղի աշակերտների և թե՛ գեղի իր խակ արտահայտությունները: Լեզվի ուսման համար շատ ոգտակար և անդիր անել տալ ընտարի լեզվով ու վոճով գրված վոտանավոր և արձակ հատվածներ:

6. Հինգերորդ դասարանից սկսած աշակերտները պետք է վարժվեն իրենց կարդացած հատվածները բերանացի և գրավոր վերապատմելուն, զեկավարվելով նախապես մշակված պլանով կամ ծրագրով:

Մ Ր Ա Գ Ի Բ

Հինգերորդ դասարան

1. 5-րդ դասարանում նյութերը դասավորված են ըստ լեզվական և գրական-ժանրային մատչելիության: Ըստությունը կատարված և այն մեթոդական սկզբունքով, վորպեսզի աշակերտները, սովորելով մաքուր գրական լեզու, գեղարվեստական խոռոչի միջոցով ըստ հնարավորի բազմակողմանի պատկերացում

առաջնան բնության անցյալի և խորհրդային իրականության,
սոցիալիզմի կառուցման և լյանքի մասին: Ծնորությունը հետա-
պնդում է նաև այն հիմնական նպատակը, վորագեղի տրված
նյութերը՝ ամենից առաջ իրեւ գեղարվեստական դրականության
նմուշներ, աշակերտի մեջ պատվաստեն սեր գեղի պատկերավոր
խոսքը՝ զարգացնելով նրա գեղարվեստական ճաշակը:

2. 5-րդ դասարանի նյութերում բացակայում են նմուշներ
թե՛ արևմտահայ գրական լեզվոց և թե՛ գավառաբարբառներից:
Գրական համապատասխան նմուշները քարտ լինելու հետևանքով՝
վերապահվում են 6-րդ և 7-րդ դասարանների համար:

3. 5-րդ դասարանի աշակերտին մատչելի բառերով տարրա-
կան գաղտնիքը պիտի տալ գեղարվեստական յերկի թեմայի և
իդեայի (ի՞նչ ե ուղղում ասել հեղինակը) մասին:

4. Նույնը վոտանապորի մասին—հանդ, չափ (տարրական
հասկացողություն վանկային բանաստեղծության մասին):

5. 5-րդ դասարանի դասադրքի համար առաջադրվում են հե-
տևյալ նյութերը.

1. Ծաղկի հեքիաթը—Հ. Թումանյան.
2. Գարունը լեռներում (հատված «Լալլարի վորսից»)—Վ.
Միրաքյան.

3. Ճախարակ—Ղ. Աղայան.
4. Զենածու Արելը—Գ. Բաշինջաղյան.
5. Չարի վերջը—Հ. Թումանյան.

6. Արևամանուկ (կրծառ) —Ղ. Աղայան.
7. Փայտահատն ու մահը—Ա. Խնկոյան.
8. Ընկերը—Ա. Խառհակյան.

9. Յերկրի մշակները—Ա. Ծատուրյան.
10. Քեփ անողի քեփը չի պակսի—Հ. Թումանյան.

11. Մեր կարմիր ձեռ—Ղ. Աղայան.
12. Վոչսարի կիթը («Լալլարի վորսից»)—Վ. Միրաքյան.

13. Իմաստում ջուլհակը—ըստ Սրբանձոյանի.


14. Մոծակն ու մըջոնը—Հ. Թումանյան.

15. Կույրերի կարծիքը—Հ. Թումանյան.

16. Ափսոս իմ մանուկ որերին—Խ. Արտվյան.

17. Յեկ գարնան անձրեւ—Ա. Ծատուրյան.

18. Տեր-թողեկի գոլոցը—Բաֆֆի.



19. Գեղջուկի մտածմունքը—Ա. Կոլցով.
 20. Զբահեղձը (թարգմ. Հ. Թումանյանի) —Ա. Պուչկին.
 21. Մայիսը դյուզում—Պ. Պոռչյան.
 22. Սուչոկի—Ի. Տուրքենե.
 23. Մանկության որեր—Մ. Նալբանդյան.
 24. Վայր ընկնող ասազեր—Մ. Նալբանդյան.
 25. Բալլար գնդապետ Տոմազոնի, կոմյերիս տղի և գործակուլի մասին—Յե. Զարենց.
 26. Մայրը—Ն. Նեկրասով.
 27. Մոմու—Ի. Տուրքենե.
 28. Դեսի Մասսի գաղաթը (հատված) —Ա. Միւթարյան.
 29. Արծիվն ու արտուռը—Հ. Հովհաննիսյան.
 30. Կաքալի վողբը—Հ. Թումանյան.
 31. Շինականի առավոտիւր յերգը—Ծ. Պատկանյան.
 32. Պոլիկուշկա (կրծատ) —Լ. Տոլսոտ.
 33. Գուբեանի յերգը—Ծ. Կուրզինյան.
 34. Սվյատովորը—թարգմ. Հ. Թումանյանի.
 35. Աշուն—Ծ. Կուրզինյան.
 36. Աղավնիները—Ի. Տուրքենե.
 37. Գարո բիծու չերամապահությունը—Հ. Թումանյան.
 38. Կյանքի ժայտը—Շիրվանզադե.
 39. Բարիկաղներում—Վ. Հյուկո.
 40. Թաղալորն ու չարչին—Հ. Թումանյան.
 41. Հրդեհը նախթահանքում—Շիրվանզադե.
 42. Յեղներուն—Հ. Թումանյան.
 43. Յեղբայրներ—Լ. Լորդկիսկանիձե.
 44. Զեյնալ-բեկ—Խ. Վեզիրով.
 • 45. Հողեհաց (հատված «Քառո»-ից) —Շիրվանզադե.
 46. Ծովը—Վ. Փափազյան.
 47. Պատրանք—Հ. Թումանյան.
 48. Յեղիպատում (կրծատ) —Շիրվանզադե.
 49. Պապն ու թոռը (կրծատ) —Ստ. Զորյան.
 50. Գործաբան—Հ. Հակոբյան.
 51. Գարուն—Վ. Տերյան.
 52. Մաքառման ժամին—Հակոբյան.
 53. Արևը—Արագի.
 54. Սպիտակ տան բնակիչները (կրծատ) —Ստ. Զորյան.

55. Սար. Շահումյանին—Հ. Հակոբյան.
 56. Լենին քեռին—Յե. Զարենց.
 57. Հեղիսթը—Արագի.
 58. Խալիչայի յերդը—Արագի.
 59. Բալլարդ—Գ. Սարյան.
 60. Արևը, հուրհրան արևը—Մ. Արմեն.
 61. Գործադուլավորների հավաքը—Ե. Զոլա.
 62. Լենին (կրծատ)՝ Ա. Վատունի.
 63. Բալլարդ—Յե. Զարենց.
 64. Հազար մանկիկ—Յե. Զարենց.
 65. Սաթո—Դ., Դեմիրճյան.
 66. Փոքրիկ լրագրավաճառը—Ա. Վատունի.
 67. Սոցիալդմի բախուը—Գ. Սարյան.
 68. Կարմիր բանակի քայլերդը—Ն. Զարյան.
 69. Հարվածայինները—Յե. Զարենց.
 70. Ավտոբուսը—Ն. Զարյան.
 71. Բնկեր Մուկուչը (կրծատ)՝ Արագի.
 72. Բուքը, մարդը, մեքենան («Ծոռչանի քարափ»-ից)՝ Ն.
 Զարյան.

ԳԵՂԵՐՈՐԳ ՊԱՍԱՐԱԿ

1. Երդ դասարանի նյութերը բաժանված են յերեք մասի՝
 սունց հասուլ վերնադրերի: Առաջին մասն ընդգրկում ե մինչ-
 հոկտեմբերյան հայ գրականությունը, յերկրորդ մասը՝ յետ-
 հոկտեմբերյան հայ գրականությունը, յերրորդ մասը՝ յեվո-
 պական և Խորհրդային Միության յեղայրակից ժողովուրդների
 գրականությունը:
2. Նյութերը կարելի յէ անցնել անխափ առաջին և յերկ-
 րորդ մասերից: Սակայն յուրաքանչյուր մասի սահմաններում
 հանձնարարելի յէ անցնել դասագրքում՝ նշած հաջորդականու-
 թյամբ:
3. Վեցերորդ դասարանի աշակերտն ընդհանուր գաղափար
 պիտի ունենա թե՛ բարբառի, մասնավորապես արարատյան բար-
 բառի և թե՛ նրա դերի մասին գրական լեզվի զարգացման բնա-
 գակառում: Իրբե կոնկրետ նյութ՝ առաջադրվում են հատված-
 ներ և Արովյանից:

4. Վեցերորդ դասարանի աշակերտը պարզ դաղավար պիտի
ունենա թե՛ պոեմի և թե՛, նամանավանդ, պատմվածքի մասին։
5. Վեցերորդ դասարանի դաստիքի համար առաջադրվում
էն հետեւյալ նյութերը։

I II III

1. Տորք-Անդեղ (հատված)՝ Ղ. Աղայան.
2. Իմ ընկեր Նեսոն՝ Հ. Թումանյան.
3. Գրագարանս՝ Հ. Թումանյան.
4. Արծիվն ու կաղնին՝ Հ. Թումանյան.
5. Քույր և յեղայիր («Արություն և Մանվել»-ից)՝ Ղ. Աղայան.
6. Մարոն՝ Հ. Թումանյան.
7. Ծղիղը՝ Հ. Թումանյան.
8. Այլազովսկու նկարի առջև՝ Հ. Թումանյան.
9. Արտը՝ Վ. Փափաղյան.
10. Փարվանա՝ Հ. Թումանյան.
11. Մերկ Դերմիչը՝ Վ. Փափաղյան.
12. Բմբոստի մահը՝ Վ. Փափաղյան.
13. Ժայռ՝ Հովհաննիսյան.
14. Վարդան Ահրումյան (հատվածներ)՝ Շիրվանդաղեա.
15. Մերմացան՝ Ալ. Ծատորյան.
16. Բանվորուհու որորը՝ Ալ. Ծատորյան.
17. Հրդեհը նավթաղործարանում՝ Շիրվանդաղեա.
18. Լեռների լանջում՝ Ալ. Իսահակյան.
19. Նեղ որերից մեկը՝ Նար-Դոս.
20. Կուենեմ ահա՝ Ալ. Իսահակյան.
21. Թե ինչ յեղավ հետո—Նար-Դոս.
22. Նորից յեկան գարնան անուշ որերը՝ Ալ. Իսահակյան.
23. Դիլջան (հատված «Առաքյալ»-ից)՝ Մուրացան.
24. Պետրոս Մասիսյան (հատված «Վոոկի աքաղաղ»-ից)՝ Բաֆֆի.
25. Զանգեղուրի լեռներում՝ Մուրացան.
26. Նվեր Վարստանի բանաստեղծներին՝ Հ. Թումանյան.
27. Միկիստան Սաքոն (հատված «Հացի խնդիր»-ից)՝ Պոռշյան.

28. Անվեսաս մարդ—Ո. Պատկանյան.
 29. Տանուտեր Խուղոն—Պ. Պռշյան.
 30. Աղասության յերգը—Մ. Նալբանդյան.
 31. Զմեռ—Խ. Արովյան.
 32. Զանդի—Ծ. Արովյան.
 33. Գիշն ուսումնարանում—Խ. Արովյան.

II Մ Ա Ս

1. Կարծես թե դարձել եմ յես տուն—Վ. Տերյան.
2. Հեշում եմ ինչպես այն ուշ...—Վ. Տերյան.
3. Լուսաբացին—Վ. Տերյան.
4. Մեծ փականքը—Արագի.
5. Արևածաղ—Վ. Տերյան.
6. Յերանի նրանց...—Վ. Տերյան.
7. Յանկապատ (կրծատ)՝ Ամ. Զորյան.
8. Աշխատանքի յերգը—Հ. Հակոբյան.
9. Պահակը—Հ. Հակոբյան.
10. Ծովանը (կրծատ)՝ Ամ. Զորյան.
11. Յես այն եմ սիրում—Հ. Հակոբյան.
12. Եշելոնը—Դ. Դեմիրճյան.
13. Բուլելիկ ե Շիրկանալը—Հ. Հակոբյան.
14. Աղա Խոսքովը (կրծատ)՝ Մ. Մանվելյան.
15. Յերգ ժողովրդի մասին (առաջին հատված)՝ Յ. Զարենց.
16. Քարհատներ—Դ. Դեմիրճյան.
17. Իմ ընկեր Լիպոն—Յ. Զարենց.
18. Նարգիզը—Դ. Դեմիրճյան.
19. Այն սարսու յերկրում—Յ. Զարենց.
20. Լույսերը (կրծատ)՝ Արագի.
21. Մահվան քայլերգ—Յ. Զարենց.
22. Կոմունատան բացումը (հատված «Ապետակ քաղաք»—ից)՝ Ամ. Զորյան.
23. Պոետի յերգը—Ա. Վատունի.
24. Ուղարկ—Ա. Վատունի.
25. Լաստանալորդները—Ա. Վատունի.

26. Կարստի Փել—Եր . Արմեն .
27. Կապը—Ն . Զարյան .
28. Գաղաթների յերդը—Ն . Զարյան .
29. Տարեղաբձի յերդը—Դ . Սարյան .

III ԵՐ Ա Ս

1. Հատվածներ «Զարյակից»—Դ . Յուրմանով .
2. Կամուրջի գրավումը—Մերափիմովիչ .
3. Զմեռվաշ իրիկուն—Ա . Պուշկին .
4. Կովկաս—Ա . Պուշկին .
5. Ուեգի յերդը—Ա . Պուշկին .
6. Թռչնիկ—Ա . Պուշկին .
7. Բարեկագների վրա—Վ . Հյուզոն .
8. Յեղենի—Հ . Հայնե .
9. Արարտամքություն Գուրեխյում—Ե . Նինոչլիկ .
10. Ուրմուլի—Ալիս Մաշաշվիլի .
11. Սպիտակ քաղաք—Միխ . Զիկովանի .
12. Մոլլա Հայդարի թալիսմանը—Ալիև .
13. Ազրիլի հարվածը—Ռահման .

Յոթերորդ գասարաց

1. Յոթերորդ դասարանի նյութերը բաժանված են չորս մասեր: ա) մինչհօկտեմբերյան գրականություն, բ) յետհօկտեմբերերյան գրականություն, գ) արևմտահայ գրականություն և դ) յելքրոպական ու Խորհրդային Միության յեղքայրակից ժողովուրդների գրականություն: Այսպիսով գալառաբարբառով գրած գրական նմուշներից հետո վեցերորդ դասարանում, յոթերորդում տրվում են նաև նմուշներ արևմտահայ գրականությունից: Ուսուցիչն ընդհանուր գաղափար պիտի տա աշակերտին, ապա անցնի կոնկրետ նյութերի վերամշակման:

2. Յոթերորդ դասարանի նյութերը դասավորված են ըստ հեղինակների: Աշակերտը պիտի խորացնի իր ունեցած գաղափարը գրողի մասին, իբրև բաղմաթիվ և իրարից տարբերվող

յերկերի կրողի: Այս տարվա դասագրքում տրվում են նաև գրող-ների համառոտ կենսագրականները: Նախորդ տարիներում ու-սուցիչը կենսագրական տեղեկություններ եր տալիս գրողի մա-սին միմիայն հարկ յեղած դեպքում: այժմ կենսագրությունների ուսումնասիրությունը սիստեմատիկ բնույթ պիտի կրի:

3. Յոթերորդ դասարանի դասագրքի նման կառուցվածքը չոփականչի այն միտքը, իր աշակերտն արդեն անցնում է դրականության պատմության սիստեմատիկ ուսումնասիրության: Բնավլ լու: Դասադրությում, նախ՝ բոլոր կարևոր հեղինակները չեն ներկայացված, և յերկրորդ՝ ժամանակագրական կարգով չեն դասալորչած նրանք: Յոթերորդ դասարանի դասադիրքը տակալին շարունակում ե մնալ գերազանցորեն լեզվի դասա-դիրք—ու միայն նախապատրաստում ե աշակերտին գրականու-թյան պատմության ուսումնասիրության անցնելու հետագա դա-սարաններում:

4. Յոթերորդ դասարանի աշակերտը պարզ դադարի պիտի ունենար դրամատիկական յերկի մասին: Պոետիկայի մասցած խնդիրների մասին ուսուցիչը—հարկ յեղած գեպօւմ—համայս-տասիսան դիտելիքներ ե տալիս աշակերտին թե՛ այս և թե՛ նա-խորդ դասարաններում:

I U U

Հ. Թումանյան

1. Հառաջանք
2. Պոետն ու մուսան
3. Նվեր Վրաստանի բանաստեղծներին
4. Անդարձ ճամբորդներ
5. Քաջ Նազար

Ղ. Աղայան

1. Հինը և նորը (հատված «Արություն և Մանկել»-ից)
2. Մի եջ իմ կենսագրությունից (հատված «Իմ կյանքի գըլ-խալոր գեպերից»):

Հ. Հովհաննիսյան

1. Մի թողներ, յերգեք...
2. Արազն յեկառի...
3. Արտապլազդ

Շիրվանզադե

1. Արտիստը (Կրժատ)
2. Մարկոս Ալմայանի մահը («Քառոս»-ից)
3. Հերոսի վերադարձը (Կրժատ)

ԱՆ. Խաչիակյան

1. Կյանքի կռվում
2. Եր կանաչ ախողել
3. Են ամուի նման

Նար-Դոս

1. Աննա Սարոյան (Կրժատ)

Լ. Մանվելյան

1. Փոթոբիկ

Մուրացան

1. Հատված «Աքատոյալ»-ից
2. Բյուրականի կոփլը

Բաֆֆի

1. Ռաբբի Շիմոնը (Հատված «Խաչագողի հիշատակարան»-ից)

Ռ. Պատկանյան

1. Յերկու բանաստեղծ

Պ. Պռոշյան

1. Գողլը դողից դողացավ...
2. Յասավուլ

Խ. Արովյան

1. Եշն ու բլրուկն
2. Բարդին ու վաղը

II U U U

Հ. Հակոբյան

1. Մեռան, չկորան
2. Հեղափոխություն
3. Նոր առաջոտ (առաջին մաս, 7-րդ և 8-րդ գլ.)
4. Վոլխովստոյ (առաջին մաս, 2-րդ, 3-րդ և 4-րդ գլ.)

Ա. Տերյան

1. Սահուն քայլերով...
2. Յերբ կհողնես...
3. Անան յերդ
4. Վերադարձ (առաջին հատված)
5. Կանչում են ինձ...

Դ. Դեմիրճյան

1. Տերտերը
2. Քաջ նազար (Ա. պատկեր, կրծառ)

Ստ. Զորյան

1. Գրադարանի աղջկը (կրծառ)
2. Հեղկոմի նախադաշը (կրծառ)

ՅԵՐԱԿԱՆ ԶԱՐԵՒՄ

1. Ամբողջական խելադարձած (կրթատ)
2. Գանգը առաջ տղամահ
3. Յերկիր նայիրի (քաղաքն ու բնակչությունը)

Ա. ՎՀԱՌՈՒՅԻ

1. Ամենուր
2. Բամբ-Բոյ (կրթատ)

Ե. ԶԱՐԵՎԱՆ

1. 26 Ենտուղիաստներ
2. Զայնանց Սանթրոսը և նրա հոգեն (հատված՝ «Բուշանի քարակը»-ից)

III Մ Ա Ս

Հ. ՊԱՐԵՆՅԱՋ

1. Հատվածներ «Մեծապատիկ մուբացկաններ»-ից

Պ. ԴՈՒՐԵՎԱՆ

1. Լճակ (կրթատ)
2. Իմ մահը
3. Տըսունչը

IV Մ Ա Ս

Մ. ԳՈՐԿԻ

1. Մըրկահավիր յերգը
2. Բաղերի յերգը
3. Դանկորի սիրութ

Ա. Պուշկին

1. Արտորյան դեկաբրիսներին

Յու. Լեմմնեռով

1. Մծիբի

Շոլովով

1. Եազուլնով («Հերկլամած իւրուան»-ից)

Հ. Հայներ

1. Շեղինիկի ջուհակները

Ե. Նինոշվիլի

1. Գողիա Ռուժիելե

Մ. Զավալսարվիլի

1. Արտեն Մարտրուելի (Համովածներ)

Հ. Եազարլի

1. Դավաճանը

Մ. Սարիբ

1. Հարուստը Բաքիլի Փալլահերին :

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՐԲԵՐԻ
5-րդ դասարան

1. Հ. Հակոբյան—Ընտիր բանաստեղծություններ
2. Հ. Թումանյան—Գեղարվեստական յերկեր
3. Ստ. Զորյան—Գրագարանի աղջկը
4. Ղ. Աղայան—Անահիտ, Տորք-Անգեղ
5. Ե. Զարյան—Մուշանի քարափը
6. Դանիել Դեֆո—Ռոբինզոն Կրուզոն
7. Բիչեր Ստոու—Բեոփ Թոմասի տնակը
8. Վ. Հյուուգո—Գավլուց
9. Լ. Տոլստոյ—Պոլիկուչկա, Տերն ու ծառան
10. Ե. Նեերով—Միշկա Դողոնով
11. Վ. Կորդես—Սոֆիա Պերովսկայա
12. Մարկ Տվեն—Ծով Սոյերի արկածները
13. Ե. Բասարե—Մյունխաուզենի արկածները
14. Ա. Հայդար—Դպրոցը
15. Լ. Կասսիլ—Կոնդուիտ


6-րդ դասարան

1. Հ. Հակոբյան—Բանաստեղծություններ
2. Ստ. Զորյան—Կարմիր արագիլ
3. Ղ. Աղայան—Յերկու քույր, Արություն և Մանվել
4. Պ. Պոռչյան—Յեցեր
5. Բաֆֆի—Վուկի աքաղաղ
6. Ֆ. Շիլլեր—Վիլհելմ Տելլ
7. Վ. Փափաղյան—Վիշապ
8. Հ. Թումանյան—Գեղարվեստական յերկեր
9. Շիրվանղազե—Գործակատարի հիշատակարանից, Հրդեհ նավթաղործարանում
10. Մ. Արմեն—Սկառուտ № 89
11. Պոլումորդվինով—Յերկաթի յեղբայրներ
12. Նմուշներ վրացական գրականությունից, լույս և տեսել 1929թ., կազմեց Յե. Զարենց
13. Նմուշներ Ադրբեյջանի գրականությունից, լույս և տեսել 1929թ., կազմեց Յե. Զարենց

14. Ժյուլ Վեռն—Խորհրդավոր կղզին.
15. Գլեղեր—Մեր հայրերը
16. Պավլենկո—Բարիկադներ
17. Ժյուլ Վեռն—Նախագիտ Գրանտի վորդիները
18. Մարկ Տվերա—Հեղիքեր Ֆիննի արկածները

7-րդ դասարան

1. Հ. Հակոբյան—Բանաստեղծություններ
2. Հ. Պարոնյան—Մեծապատիլ մուրացկաններ
3. Նար-Դոս—Մեր թաղը, Աննա Սարոյան, Յերկերի առաջին հասորը
4. Ա. Իօանակյան—Բանաստեղծություններ
5. Վ. Տերյան—Բանաստեղծություններ
6. Յե. Չարէնց—Պոեմներ
7. Վ. Միքայելյան—Լավարի վորար
8. Ալֆոնս Դողե—Տարասկոնցի Տարտարեն
9. Մ. Գորկի—Պատմվածքներ, Մանկություն
10. Արագի—Լույսեր
11. Խաղին—Հեղափոխության թմրկահարը
12. Բ. Յասինսկի—Ես այրում եմ Փարիզը
13. Լ. Տուստոյ—Կաղակներ, Հաջի Մուրադ
14. Ի. Տուրգենև—Վորոնորդի հիշատակարանից
15. Զ. Սվիֆտ—Գուլիվերի ճանապարհորդությունը
16. Մ. Անդրեսեն—Պելլե նվաճողը
17. Պ. Չիմիչվածե—Հարկեր
18. Մ. Զալիխանչյանի—Արսեն Մարարգելի
19. Հ. Մեհմետ—Վարարում
20. Ա. Պուշկին—Բանաստեղծություններ, Հեքիաթներ
21. Շոլոխով—Հերկած խոպան
22. Սա. Զորյան—Մի կանքի պատմություն
23. Կորոլենկո—Կույր յերաժիշտը
24. Ն. Ոստրովսկի—Ինչոքիս եր կոփվում պողպատը
25. Դ. Ֆուրմանով—Զավակե
26. Ա. Սերաֆիմովիչ—Ցերկաթե հեղեղ
27. Յանովսկի—Զիալորներ
28. Մ. Արմեն—Առաջին պատկոմներ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004475

ЦЕНА

684, ԳԵՂԱ ՅՈ ԿՈՓ.

123099



Программы средней школы
Армянский яз. и литература
Гиз ССР Армении, Эревань, 1936 г.

Проб